



ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Որոշում թիվ 02

23-ը Փետրվարի 2016թ.

գ. Վարդաձոր

Վարդաձոր գյուղի 14-րդ փողոցի 6-րդ նրբ. թիվ 5 հասցեի 05-084-0037-0005 ծածկագրով հողամասի և շենք շինությունների նկատմամբ Վիրաբ Գարեգինի Կարապետյանի ընտանիքի գույքային իրավունքները վերականգնելու մասին:

Հաշվի առնելով, որ շինությունը կառուցվել է մինչև 2001թ., հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերի պահանջներին, ընդգրկված է հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նշված տարածքներում: Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ 2008թ. հունիսի 10-ի ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով.

Որոշում են՝

1. Վերականգնել վերը նշված հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Վիրաբ Գարեգինի Կարապետյանի /մահ. 05.06.2005թ./, Վարդուշ Արամի Կարապետյանի /մահ. 03.06.1998թ./, Անժիկ Վիրաբի Կարապետյանի /ծնվ. 20.08.1966թ./, Սիմոն Վիրաբի Կարապետյանի /ծնվ. 09.11.1969թ./ Ալիտա Վիրաբի Կարապետյանի /մահ. 18.07.2008թ./ հողօգտագործման իրավունքը, շինության զբաղեցրած տարածքի և սպասարկման համար անհրաժեշտ 0.2155 հա հողամասի և դրա վրա կառուցված շենք շինությունների՝ 88.99քմ գոմ հացատան և 5.00քմ շվաքարանի նկատմամբ:

2. Շենք շինությունների մակերեսները ենթակա չեն ճշտման ԱԳԿ Մարտունու տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի քաղաքաշինության մասնագետի կողմից տրված հատակագծով:

4. Շինությանը տրամադրել 14-րդ փողոց 6-րդ նրբ. թիվ 5 հասցեն:

5. Առաջարկել ԱԳԿ Գեղարքունիքի տարածքային ստորաբաժանմանը գրանցել Վիրաբ Կարապետյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և շենք շինությունների նկատմամբ և տրամադրել սեփականության իրավունքի գրանցման վկայական:

6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Վարդաձորի գյուղապետ՝

*(Signature)* Ռ. Սիրականյան